

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
04/11/2019թ. թիվ 7-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«__» _____ 2019թ.

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
նախագահ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ



Ներսես Երիցյան

Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ)

1. 30-րդ կետի 2-րդ ենթակետի աղյուսակում բոլոր «1.35» թվերը փոխարինել «1» թվով:

2. Գլուխ 5.1-ը լրացնել 35.8-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«35.8. Նախորդ ժամանակահատվածներում որևէ ապահովագրական ընկերության (ապահովագրական ընկերությունների) կողմից անդամավճարի և Ծառայության մատուցման դիմաց կատարման ենթակա վճարի հաշվարկման համար հիմք հանդիսացող որևէ տվյալի (տվյալների)՝ տվյալ տարվա ընթացքում ցանկացած պատճառով ճշգրտման դեպքում ճշգրտված տվյալի (տվյալների) կուտակային արդյունքներն (յուրաքանչյուր ապահովագրական ընկերության դրական կամ բացասական տարբերություններն) արտացոլվում են բոլոր ապահովագրական ընկերությունների կողմից այդ տարվա դեկտեմբեր ամսվա անդամավճարների և Ծառայության մատուցման դիմաց կատարման ենթակա վճարների մեծության հաշվարկում՝ սույն կանոնադրության 32-րդ կետով նախատեսված պարբերական անդամավճարի հաշվարկը պարունակող տեղեկանքում և 35.3-րդ կետով նախատեսված՝ Ծառայության վճարի՝ յուրաքանչյուր ապահովագրական ընկերության մասնաբաժինը պարունակող ակտում ճշգրտման չափի և ընթացիկ ամսվա (տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա) համար վերջնական վճարման ենթակա գումարի սյունակներ ավելացնելու և դրանց չափերն արտացոլելու, ինչպես նաև համապատասխան ամիսների համար ճշգրտված տեղեկանքներն ու ակտերն ընթացիկ ամսվա (տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա) վերաբերյալ փաստաթղթին կցելու միջոցով:»: